

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ  
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

**Կայացած՝ 20-ը դեկտեմբերի 2019 թվական**

**քաղաք Գյումրի**

2019 թվականի դեկտեմբերի 20-ին ՀՀ Շիրակի մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ Շիրակի մարզի խորհրդի հերթական նիստը:

Մասնակցում էին ՀՀ Շիրակի մարզի 42 համայնքների ղեկավարներից 40-ը, Հայկասար և Վարդաքար համայնքների ղեկավարները բացակայում էին հարգելի պատճառով:

Մարզի խորհրդի նիստը վարում էր՝ ՀՀ Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանը:

Մարզի խորհրդի նիստին մասնակցում էին նաև՝

- մարզպետի տեղակալը, խորհրդականները, օգնականները,
- մարզպետարանի վարչությունների և բաժինների պետերը,
- զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ
- ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնի պետը:

**Մինչ օրակարգային հարցերին անցնելը մարզպետը շնորհակալագրեր հանձնեց տարբեր բնագավառների ներկայացուցիչներին՝ նվիրումով աշխատանքի համար, մասնավորապես.**

**համայնքային ծառայություն՝**

ՀՀ Շիրակի մարզի Սարապատի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Համլետ Ավետիսյանին,

**քաղաքացիական ծառայություն՝**

ՀՀ Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Մկրտիչ Ասատրյանին,

**պաշտպանություն՝**

ՀՀ ՊՆ Շիրակի կայազորի թիվ 55035 զորամասի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Արմեն Գրիգորյանին,

ՀՀ Շիրակի մարզի զինվորական կոմիսարիատի զորակոչային բաժանմունքի զորակոչի գլխավոր մասնագետ Լևոն Բարսեղյանին,

Գյումրիում տեղակայված ՌԴ 2012 զորամասի շտաբի պետի տեղակալ-բաժանմունքի պետ, փոխգնդապետ Դավիթ Միրզոյանին,

**ոստիկանություն՝**

ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության ծառայության խմբի ավագ տեսուչ, ոստիկանության մայր Տիգրան Սահակյանին,

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ-վարչության պետի տեղակալ, փրկարար ծառայության փոխգնդապետ Լևոն Հովսեփյանին,

**առողջապահություն՝**

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի պրոֆիլակտիկ պատվաստումների կաբինետի բուժքույր Մերի Համբարյանին:

**Մարզպետը ՀՀ վարչապետի անունից, հայրենի հողին անմնացորդ նվիրումի և երկարամյա անխնջ աշխատանքի համար, Շիրակի մարզի Անի համայնքի Նորշեն**

**(Խարկով) բնակավայրի բնակչուհի Վահանդուխտ Մխիթարի Մելքոնյանին հանձնեց շնորհակալագիր և դրամական պարգև:**

Մարզպետը նաև տեղեկացրեց, որ ՀՀ վարչապետի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի, Շիրակի մարզպետարանի և պատասխանատու մի շարք այլ կառույցների հետ համատեղ, ամիսներ շարունակ տարված աշխատանքի շնորհիվ պատմական Անի մայրաքաղաքի հարևանությամբ գտնվող տարածքի մուտքի ռեժիմը փոփոխվելու է եկող տարվանից, որի արդյունքում հայ մարդը և զբոսաշրջիկները հնարավորություն կունենան հայկական կողմից մուտք գործել այդ տարածք:

Այնուհետև մարզպետը ներկայացրեց մարզի խորհրդի նիստի օրակարգի նախագիծը՝

**1. ՀՀ Շիրակի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից 2019 թվականին կատարված աշխատանքների մասին**

**Ձեկուցողներ՝**

- Լիպարիտ Մարտիրոսյան - ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ,
- Արամ Անտոնյան - տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ,
- Ալբերտ Մարգարյան - քաղաքաշինության վարչության պետ,
- Մովսես Մանուկյան - գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,
- Հրայր Կարապետյան - կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,
- Լեյլի Ասլանյան - առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող,
- Չորիկ Խաչատրյան - հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ,
- Վահան Մարտիրոսյան - զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ

**2. Հայտարարություններ**

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չեղան, օրակարգը հաստատվեց: Այնուհետև անցան օրակարգային հարցերի քննարկմանը:

**ԼՍԵՑԻՆ 1. ՀՀ Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության կողմից 2019 թվականին կատարված աշխատանքների մասին:**

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյան*

**(Ձեկուցագիրը կցվում է)**

Մարզպետը, կարևորելով քաղաքաշինության ոլորտում որակի և ժամկետի ապահովման հարցերը, նշեց որ մարզի համար 2019 թվականը դրական և կտրուկ տեղաշարժի տարի էր, իրականացվել են բազմաթիվ շինարարական ծրագրեր, որտեղ կարևորվել է որակը: 2019 թվականը բոլորի, այդ թվում նաև շինարարական կազմակերպությունների համար կարևոր տարի է եղել հատկապես դասեր քաղելու առումով, հստակ նախանշվել ու ընդգծվել են մեր առաջնահերթությունները, խնդիր է առաջադրվել, որ որակի հաշվին ոչ մի այլ քայլ չի լինելու և անորակ աշխատանք չպետք է իրականացվի:

Մարզպետը նշեց, որ 2018 թվականի համեմատությամբ գրեթե բոլոր ցուցանիշներով աճ է արձանագրվել ճանապարհաշինության, բնակապահովման, կրթական օբյեկտների

շինարարության աշխատանքներում: Համատեղ աշխատանքի շնորհիվ այս գործելաճը կշարունակվի նաև 2020 թվականին:

Չեկուցողը նաև ավելացրեց, որ 2019 թվականին իրականացված սուբվենցիոն ծրագրերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի թերությունների պատճառով դժվարություններ են առաջացել շինարարության ընթացքում: Նա առաջարկեց համայնքների ղեկավարներին հետևողական լինել և խիստ ուշադրություն դարձնել որպեսզի հաջորդ տարվա սուբվենցիոն ծրագրերը ներկայացվեն միայն փորձաքննություն անցած նախագծա-նախահաշվային փաստաթղթերի առկայության պայմաններում: Բացի այդ, նաև տեղեկացրեց, որ գնումների մասին օրենսդրության մեջ կատարվել են փոփոխություններ՝ մասնավորապես սուբվենցիոն ծրագրերի հետ կապված շինարարական կազմակերպությունների ընտրության մրցույթի ընթացակարգում:

Այնուհետև Փանիկ համայնքի ղեկավարը հարց բարձրացրեց Արթիկի տարածաշրջանի մի շարք ճանապարհների խնդրի վերաբերյալ, նշելով որ գերբեռնված բեռնատար մեքենաները մեծ վնաս են հասցնում առանց այն էլ ոչ բարվոք վիճակում գտնվող Նոր Կյանք, Սպանդարյան, Մեղրաշեն, Արթիկ համայնքների ճանապարհներին: Նա միաժամանակ առաջարկեց հաջորդ տարի հանձնաժողով ձևավորել, քննարկել հարցը և միջոցներ ձեռնարկել նշված ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների կատարման ուղղությամբ:

Մարզպետը կարևորեց բարձրացված հարցի լուծման անհրաժեշտությունը, ավելացնելով նաև Անուշավան-Արթիկ ճանապարհի կարևորությունը և միաժամանակ տեղեկացրեց, որ այդ ճանապարհների հարցի համատեղ լուծման համար արդեն իսկ քայլեր ձեռնարկվել են, ինչպես նաև գերբեռնված բեռնատար մեքենաների նկատմամբ նույնպես համապատասխան միջոցներ կձեռնարկվեն ճանապարհային ուստիկանության հետ համատեղ:

**ԼՍԵՑԻՆ 2. ՀՀ Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից 2019 թվականին կատարված աշխատանքների մասին**

*Չեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հրայր Կարապետյան*

**(Չեկուցագիրը կցվում է)**

Մարզպետը կարևորեց որակյալ և արժանապատիվ կրթությունը մարզի դպրոցներում, ինչպես նաև հորդորեց համայնքների ղեկավարներին և դպրոցների խորհրդներին՝ լինել անաչառ և որոշումներ կայացնելիս առաջնորդվել միայն ու միայն երեխաների շահերից: Դպրոցի զարգացմանը զուգընթաց կզարգանա նաև երկիրը, քանի որ ներկայիս սերունդը ունի մեծ պոտենցյալ:

**ԼՍԵՑԻՆ 3. ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության կողմից 2019 թվականին կատարված աշխատանքների մասին**

*Չեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյան*

**(Չեկուցագիրը կցվում է)**

Անդրադառնալով համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշներին, մարզպետը ոգևորիչ համարեց մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման բարձր ցուցանիշների ապահովման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Եվս մեկ անգամ հորդորեց սեփական եկամուտների 70%-ից ցածր կատարողականներ ունեցող համայնքների ղեկավարներին՝ շարունակական աշխատանք տանել մինչև տարվա ավարտը սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները բարելավելու ուղղությամբ:

**ԼՍԵՑԻՆ 4. ՀՀ Շիրակի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության կողմից  
2019 թվականին կատարված աշխատանքների մասին**

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Արամ Անտոնյան*

**(Ձեկուցագիրը կցվում է)**

Ձեկուցողը հորդորեց համայնքների ղեկավարներին՝ իրենց և համայնքների ավագանիների կողմից ընդունված իրավական ակտերի վերաբերյալ մարզպետարանի կողմից ստացված առարկությունները սահմանված ժամկետներում քննարկել և ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցված որոշումները կրկին ներկայացնել մարզպետարան:

**ԼՍԵՑԻՆ 5. ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և  
բնապահպանության**

**վարչության կողմից 2019 թվականին կատարված աշխատանքների**

**մասին**

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և*

*բնապահպանության վարչության պետ Մովսես Մանուկյան*

**(Ձեկուցագիրը կցվում է)**

**ԼՍԵՑԻՆ 6. ՀՀ Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական  
ապահովության վարչության կողմից 2019 թվականին կատարված  
աշխատանքների մասին**

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական*

*ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող*

*Լեյլի Ասլանյան*

**(Ձեկուցագիրը կցվում է)**

**ԼՍԵՑԻՆ 7. ՀՀ Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման  
բաժին-մարզային հողային պետական տեսչության կողմից 2019  
թվականին կատարված աշխատանքների մասին**

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-*

*մարզային հողային պետական տեսչության պետ Չորիկ Խաչատրյան*

**(Ձեկուցագիրը կցվում է)**

**ԼՍԵՑԻՆ 8. ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության  
և**

**վերլուծության բաժնի կողմից 2019 թվականին կատարված  
աշխատանքների մասին**

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և*

*վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահան Մարտիրոսյան*

**(Ձեկուցագիրը կցվում է)**

Ամփոփելով 2019 թվականին կատարված աշխատանքներն ու համայնքների հետ համագործակցված աշխատանքը՝ մարզպետը նշեց, որ 2020 թվականից ավելի մեծ ակնկալիքներ ունի և 2020 թվականը ավելի շատ աշխատանքի, նոր տեմպերի ու սպասումների տարի է լինելու: Երկրի համաչափ զարգացմանը կհասնենք համայնքների համաչափ զարգացում ապահովելով, իսկ դրա համար անհրաժեշտ է, որ համայնքների ղեկավարները ևս

սրտացավ ու պարտաճանաչ աշխատանք ցուցաբերեն, իսկ համագործակցության արդյունքում կարձանագրվեն նոր ձեռքբերումներ: 2020 թվականին սպասվում է ակտիվ աշխատանքային տարի, ձեռքբերումները պետք է բազմապատկենք ու շարունակենք աշխատել՝ հանուն մեր մարզի և երկրի զարգացման:

Մարզի խորհրդի նիստն ամփոփեց ՀՀ Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ  
փոխարինող

*Արձանագրեց՝ Տաթևիկ Առաքելյանը*